

ԽԱՀԱԿԻՈՂ

Posted on December 10, 2013 by Keghart




Category: [Opinions](#)



Ճորճ Ազատ Աբելեան, (1945 - 2008)**Վահե Յ. Աբելեան, 3 Դեկտեմբեր 2013**


Շաբաթ 18 Հոկտեմբեր 2008: Աբելեաններուն տոհմիկ գիւղէն - Քերքիւնայէն - շատ շատ հեռու, զոյգ

 քաղաքներ (Twin Cities) կոչուած քաղաքին օդակայանին մէջն էի, երբ հեռաձայնով մայրս գուժեց

Ճորճ Աբելեանին վաղաժամ մահուան լուրը: Մահը պատահած էր այդ Շաբաթ օրուան վաղ առաւօտեան ժամերուն եւ մարմինը ամփոփուած էր Քերքիւնայի պապենական գերեզմանատան մէջ նոյն օրը, կէսօրէ ետք՝ յետ արարողութեան Քերքիւնայի պատմական Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ: Չէի կրնար պատկերացնել աւելի պատշաճ եւ Ճորճը ամբողջացնող հանգստեան վերջին կայան մը անողոք հիւանդութեան մէջ մաշած իր մարմինին համար: Կարծես ինքն ալ անոր համար կատարած էր իր վերջին ուղեւորութիւնը դէպի իր արմատները: Խաբուսիկ բայց հանգստացնող բան մը ունի Ճորճի թաղման այս իրողութիւնը:

Ճորճ Ազատ Աբելեան, (1945 - 2008)**Վահե Յ. Աբելեան, 3 Դեկտեմբեր 2013**

Շաբաթ 18 Հոկտեմբեր 2008: Աբելեաններուն տոհմիկ գիւղէն - Քերքիւնայէն - շատ շատ հեռու, զոյգ

 քաղաքներ (Twin Cities) կոչուած քաղաքին օդակայանին մէջն էի, երբ հեռաձայնով մայրս գուժեց

Ճորճ Աբելեանին վաղաժամ մահուան լուրը: Մահը պատահած էր այդ Շաբաթ օրուան վաղ առաւօտեան ժամերուն եւ մարմինը ամփոփուած էր Քերքիւնայի պապենական գերեզմանատան մէջ նոյն օրը, կէսօրէ ետք՝ յետ արարողութեան Քերքիւնայի պատմական Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ: Չէի կրնար պատկերացնել աւելի պատշաճ եւ Ճորճը ամբողջացնող հանգստեան վերջին կայան մը անողոք հիւանդութեան մէջ մաշած իր մարմինին համար: Կարծես ինքն ալ անոր համար կատարած էր իր վերջին ուղեւորութիւնը դէպի իր արմատները: Խաբուսիկ բայց հանգստացնող բան մը ունի Ճորճի թաղման այս իրողութիւնը:

Սպասման սրահին մէջն եմ դէպի Լոս Անճելոս ուղեւորութեան համար, ուր այնպայմանօրէն կը հանդիպէի իրեն: Բնականաբար կը պրպտեմ յիշողութիւնս եւ հոն կը գտնեմ զինք ոչ որպէս առօրեայ ներկայութիւն, այլ մեր կեանքին հանգրուաններուն շարանին մէջ: Քերքիւնայի մէջն է ան, երբ մենք տակաւին պատանհներ կը խաղայինք իրենց ընտանիքին պատկանող Նոֆերենց հոչակաւոր *մանկանային* - ձիթահանին - շուրջ: Աւիլի ուշ, Հալէպի մէջ, երբ ես որպէս սկաուտ Պէյրութէն կը մասնակցեի ՀՄԸՄ մարզական խաղերու տողանցքին, կը հանդիպէի Ճորճին: Տարիներ վերջ Պէյրութէնք ուսանողական մեր տարիներուն, ուր արդէն ցոյց կու տար կուտակուած ազգասիրութեան մը իւրայատուկ եռանդ: Եւ վերջապէս Լոս Անճելոս է եւ տակաւին պատնէշի վրայ՝ իբր հեռատեսելի “Գիրքերու Հետ” շաբաթական յայտագիրով, որ վարեց տասնամեակ մը՝ պատգամելով իր եղբնեայ գրիչովը:

Այսպէս Ճորճը բնակեցաւ Քեսապ, Հալէպ, Պէյրութ, Լոս Անճելոս. բայց միշտ ապրեցաւ փւրեղացած

իր հայ ներաշխարհին ներս: Չեմ գիտեր բնութեան ո՞ր դասաւորումը այսքան հայրինասիրութիւն կուտակած էր այս տղուն հոգիէն ներս, չըսելու համար հայրենապաշտութեամբ բեռնաւորած էր զինք, որպէս խաչ մը, որ տառաջօրէն ուսամբարձ շալկեց Ապրիլ 24-ին, 1972-ի հաւաքական հետիոտն ուխտագնացութեան ընթացքին, Անթիլիասի վանքէն դէպի Պիքֆայայի բարձունքին վրայ գտնուող Մեծ Եղեռնի յուշարձանը: Հայաստանի անկախութենէն ետք կրկին անգամ կատարեց խաչակրութիւն մը դէպի Գարիգին Նժդեհի շիրիմը որպէս ուխտագրացութիւն:

Ճորճը չկրցաւ տեսնել ազգային տոհմիկ արժեքներով բիւրեղացած հայախմբումի իրողութիւնը իր պատմական հողերուն վրայ: Սակայն բախտաւորութիւնը ունեցաւ ապրիլ անոր անհատական եւ մտերմիկ իրողութիւնը, յանձին Հալէպի մէջ ծնած, հայկական տոհմիկ ընտանիքի մէջ հասակ առած, Շաքէ անունով հայ աղջկայ մը մօտ, որ դարձաւ Ճորճի կեանքին հարազատ եւ անձնուռաց ընկերակիցը մինչեւ վերջ:

Այսպէս, Ճորճի բովանդակ կեանքը ազգային հաւաքական իտեալին որոնումը եղաւ որպէս տաճար մը կառուցուած անխարդախ արժեքներու վրայ, ուր կմախքացած հայորդիներ պիտի հաղորդուէին այդ իտեալներով, վերակենդանանալու համար: Կ'ուզեմ հաւատալ որ այդ ձգտումին գնահատանքը ապրեցաւ իր վերջին տարին: Կը հաւատամ այդ եղաւ այն պահուն, երբ, հեռատեսիլի կայանի վրայ, հայ երիտասարդ եւ երիտասարդուհի մը զինք հրաւիրեցին ըլլալ, հայ երիտասարդութեան պատգամաբերը 2008-ի Ապրիլ 24-ի առթիւ քաղաքական հաւաքին, իրեն յանձնելով գնահատագրի տախտակ մը:

Ես մեր իրողութեան մէջ չեմ հանդիպած նման ինքնաբուխ գնահատանքի, այդ ալ հայ երիտասարդութեան կողմէ, մէկու մը, որ ո՛չ ուսուցիչ է, ո՛չ կրօնական կամ կուսակցական, եւ հետեւաբար չի պատկանիր որեւէ միութեան մը՝ ըլլայ այդ կրթական, մշակութային, կրօնական կամ քաղաքական: Ան ինքնատիպ անձ մըն է իր ուրոյն համոզումներով, անսակարկ ազգասիրութեամբ մը տոգորուած եւ բացարձակապէս խիզախ:

Մահուընէ քանի մը ամիսներ առաջ, իր շրջապատը զուարթացնելու տրամադրութեամբ, այսպէս արտահայտուեցաւ. «Ես արդէն անդի աշխարհին հետ կապի մէջ եմ, ամէնքն ալ հոն են: Հետեւաբար այս ազգին մազին անգամ դաչողը թող չկարծէ որ ինձմէ ազատած է»:

Կեանքին եւ գործին կառչած այս տղուն հրամայականը ազգասիրութիւնն էր ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր: Այդպէս ալ տառաջօրէն մնաց մինչեւ իր մահուան սեմին, ինչպէս կը վկայէ իր կինը Շաքէն եւ եղբայրը Աշոտը: Երբ ան մահուան սեմին էր եւ ուժասպառ, գերմարդկային ճիգով մը Քէսապէն շուրջ 100 քիլոմէթր անդին, արաբացած եւ իսլամացած գիւղ մը գնաց զգաստութեան բերելու համար գիւղացիները իրենց հայ տոհմիկ ժառանգութեան:

Սիրելի եւ անմոռանալի Ճորճ: Ահաւասիկ հինգ տարիներ անցած են վաղաժամ մահուանդ վրայ: Այժմ դուն շրջապատուած ես քու հարազատներովդ եւ պատսպառուած Քէորքիւնայի դարաւոր կաղնիին հովանիին տակ որպէս յիշատակ: Պիտի չզարմանամ որ գերեզմանդ ուխտատեղի մը դառնայ եղեգնեայ գրիչը ձեռքիդ պատգամներուդ ականջալուր Արմէնին եւ Արմէնուհիին, որոնք տարիներու ընթացքին ալեւորած եւ ալեհեր, այցելէն շիրիմիդ՝ հաղորդուելու համար, որ ազգային

Իտեալները կարելի է թարմ պահել ամբողջ կեանքի մը տեւողութեան, ինչպէս դուն ըրիր քու բովանդակ կեանքիդ ընթացքին:

